

## Հայտարարություն

### «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՆՈՒՅ» ՀՈԱԿ-Ի ԼՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ՉԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի << Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության Լոր բնակավայրի գործող կարճաժամկետ խմբի դաստիարակի թափուր պաշտոնի համար՝ 0,5 դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆատրակավորման պահանջներին համապատասխանող

անձը: <https://escs.am/am/news/4652>

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմում (Ձև 1).
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
- 3) անձը հաստատող փաստաթուղթ.
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4).
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անց է կացվելու 2023թ. փետրվարի 15-ին ժամը՝ 10:30-ին,

ք. Սիսիան, Սպանդարյան 82 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը մինչև 2023թ. փետրվարի 8-ը, ժամը 17: 30-ը:

Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝

<https://escs.am/am/news/11978>

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094205911 հեռախոսահամարին կամ այցելել << Սիսիանի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ:

Հասցե՝ ք.Սիսիան, Սպանդարյան 82

Էլ. փոստ՝ [tiv2nuh@sisian.am](mailto:tiv2nuh@sisian.am)